# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**12 նոյեմբերի 2021 թվականի N 472-Ա**

**ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 4052-Լ հրամանը և «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի գրությունը.

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1.Հաստատել՝ նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) անհրաժեշտությամբ պայմանավորված «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության առանձին բաժանմունքում կորոնավիրուսի հիվանդության (COVID-19) ախտորոշումը հաստատված պացիենտների բժշկական օգնության և սպասարկման ծառայության հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 25-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

12.11.2021

X [signature]

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ